600.0030.29.10.99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 1999 թվականի №30
քաղ. Երևան

1999-2000թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով և 20-րդ հոդվածի ա) կետով, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝
   1.1. 1999-2000թթ. ձմռան ժամանակաշրջանի կենտրոնացված ջեռուցման սակագներն ըստ բնակավայրերի՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (հավելված):
   1.2. 1999-2000թթ. ձմռան ժամանակաշրջանի համար «Հայգազարդ» ՊՓԲԸ-ի «Գյումրիջերմո» ջերմամատակարարման արտադրամասի կողմից ջեռուցման նպատակով առաքվող ջերմային էներգիայի սակագինը՝ 7890 դրամ/Գկալ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 1999թ. դեկտեմբերի 1-ից:

ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի
նախագահ՝ **Վ. Մովսեսյան**